

Ձեռնարկատիրական աշխատանք
Հայաստանի երիտասարդության համար.
աջակցություն երիտասարդ ձեռներեցներին





Ինչո՞ւ երիտասարդների ձեռներեցության զարգացում Հայաստանում



- Տնտեսական ճգնաժամի, աշխատաշուկայի սահմանափակ հնարավորությունների հետևանքով աճող գործազրկությունը և աղքատությունը բացասաբար են ազդում հատկապես երիտասարդների վրա:
- Չնայած երկրում սկսնակ ՓՄՁ-ների աջակցության ծրագրերի առկայությանը՝ դրանց ազդեցությունը դեռ սահմանափակ է: Բացի այդ, ծրագրերից և ոչ մեկն ուղղված չէ զուտ երիտասարդների աջակցությանը:
- Երիտասարդների գործազրկության դեմ պայքարի հիմնական խոչընդոտներից է սկսնակ ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների դժվար հասանելիությունը:
- **Կայուն և հարատև բիզնեսը մեծապես նպաստում է տնտեսական աճին, աշխատատեղերի ստեղծմանը, կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը և նորարարությունների զարգացմանը:**

Հայաստանը բարձր մարդկային զարգացման ինդեքս (0.716) ունեցող զարգացող երկիր է, որը 2002թ.-ից դասվում է միջին եկամուտ ունեցող երկրների շարքին գտնվելով այդ շարքի ստորին հատվածում: Երկիրը ներկայումս առնչվում է համաաշխարհային ճգնաժամի բացասական

հետևանքների, ինչպես նաև բաց և մրցունակ շուկա ձևավորելու համար Հայաստանի տնտեսության վերակառուցման անհրաժեշտության հետ կապված բազում մարտահրավերների հետ: Երիտասարդները հատկապես խոցելի են աճող գործազրկության ու աղքատության պայմաններում, հետևաբար

Երիտասարդների գործազրկության խնդրի լուծումն առաջնային և հրատապ է դառնում ՀՀ կառավարության համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ՀՀ կառավարությունը դիմել է ՄԱԱԶԿ-ին երիտասարդների շրջանում ձեռնարկատիրության զարգացմանն աջակցելու խնդրանքով:

ՄԱԱԶԿ-ն, հանդիսանալով չեզոք միջնորդ և ունենալով զգալի փորձ սկսնակ բիզնեսների և ընդհանրապես ձեռնարկատիրության զարգաց-

ման ոլորտներում, մշակել և կիրառում է «Ձեռնարկատիրական աշխատանք երիտասարդներին» մոտեցումը Հայաստանում երիտասարդների զբաղվածությունը խթանելու համար մատնանշելով, որ մասնավոր բիզնեսը կարող է հարատև տնտեսական աճի ապահովման լավագույն միջոցը դառնալ ինչպես ձեռնարկատերերի, այնպես էլ ՀՀ կառավարության, ֆինանսական հաստատությունների և բիզնեսին աջակցող կառույցների համար:

Ինչ՞ու՞մ ՄԱԱԶԿ-ն

Լուսավորե՛ք Ձեր ապագան – ՄԱԱԶԿ-ի «Ձեռնարկատիրական աշխատանք երիտասարդների համար» ծրագրի հետ

Խնդիր. աշխատաշուկայի սահմանափակ հնարավորությունների հետևանքով երկրում աճող գործազրկության և աղքատության մակարդակը

Ձեռնարկատիրության խթանումը նպաստում է տնտեսական աճին, աշխատատեղերի ստեղծմանը, կառուցվածքային փոփոխությունների խթանմանը և նորարարությունների զարգացմանը:

Ձեռնարկատիրության զարգացման ռազմավարությունն ուղղված է երիտասարդների զբաղվածության խնդրի լուծմանը և տեղական ներդրումների խթանմանը, ինչը երկիրն առավել գրավիչ կդարձնի արտաքին ներդրողների համար:

ՄԱԱԶԿ-ն ավելի քան 15 երկրներում հաջողությամբ ներգրավված է երիտասարդության համար աշխատանքի հնարավորություններ և աշխատատեղեր ստեղծելու և ընդլայնելու նախաձեռնություններում:

Արձանագրված արդյունքներից են մասնավորապես.

- ձեռնարկատիրական մշակույթի ձևավորումը և տարածումը, երիտասարդների շրջանում ձեռնարկատիրության խթանման միջոցով աշխատատեղերի ստեղծումը,
- ՓՄՁ-ների և սկսնակ ձեռնարկատերերի համար ֆինանսական միջոցների հասանելիության ապահովումը տեղական ֆինանսական հաստատությունների հետ կապեր հաստատելու կամ նպատակային հիմնադրամներ ձևավորելու միջոցով,
- պետական և մասնավոր հատվածների կողմից գործարար ծառայությունների որակի բարելավումը, հատկապես երբ գործը վերաբերում է երիտասարդ կին և տղամարդ գործարարներին,
- երիտասարդների կողմից աճի ներուժ ունեցող բիզնեսների ստեղծումը,
- երիտասարդների համար երկարաժամկետ, արդյունավետ զբաղվածության հնարավորությունների ստեղծումը:

Համապարփակ կայուն արդյունաբերական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ներդրումներ


կատարել աճի ներուժ ունեցող մասնավոր ոլորտում, բիզնեսի զարգացմանը նպաստող կառույցներում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման և հատկապես նորարարությունների խթանման հարցում առանձնակի դեր ունեցող երիտասարդներին աջակցելու նախաձեռնություններում:

Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հետևյալ կայքից. <http://www.unido.org/en/what-we-do/poverty-reduction-through-productive-activities/business-investment-and-technology-services/investment-and-technology/productive-work-for-youth.html>

Գիտե՞ք արդյոք՝

2014թ.-ից ՄԱԱԶԿ-ն համարվում է ՄԱԿ-ի գործակալություններից կազմված «Երիտասարդության խնդիրների և զարգացման միջգերատեսչական ցանցի» համանախագահող:

Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար. աջակցություն երիտասարդ ձեռներեցներին



Նպաստակր. աջակցություն երիտասարդների կողմից բիզնեսների ստեղծմանն ու ընդլայնմանը այդպիսով նպաստելով մասնավոր ոլորտի կայուն զարգացմանը: Օրագիրը կփորձի ապացուցել, որ երիտասարդները կարող են լինել վարկունակ և իրենց գաղափարները վերածել շահութաբեր բիզնեսի:

Շահառուները. 18-35 տարեկան, իրատեսական բիզնես գաղափարներ ունեցող անհատները կամ մինչև 3 տարի պետական գրանցում ունեցող սկսնակ ձեռնարկատերերը: Երիտասարդ կանանց մասնակցությունը խրախուսվում է:

Օրագիրն իրականացվում է Ավստրիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ, Հայաստանի գործընկեր հաստատությունների հետ համատեղ և նպատակ ունի երիտասարդների կողմից բիզնեսների ստեղծմանն ու ընդլայնմանն աջակցելու միջոցով նպաստել Հայաստանում մասնավոր ոլորտի կայուն զարգացմանը: Օրագրի ազգային գործընկեր Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ՋԱԿ), կիրառելով համապարփակ մոտեցում, 18-35 տարեկան երիտասարդ ձեռներեցներին ցուցաբերում է ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցություն բիզնեսի հիմնադրման և զարգացման բոլոր փուլերում: Օրագրի համար առաջնային են նորարարական և աճ ապահովող բիզնես գաղափարները, որոնք աշխատատեղեր ստեղծելու և նորարարական գաղափարներ տարածելու ներուժ ունեն:

Ակնկալվող արդյունքները

- Նպաստել համակարգային փոփոխություններին, որի արդյունքում կբարձրանա պետական և մասնավոր հատվածի կողմից երիտասարդ ձեռնարկատերերին ցուցաբերվող ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության արդյունավետությունը:

- Ապացուցել, որ երիտասարդներին ուղղված ֆինանսավորման սխեմաները կարող են շահավետ լինել բոլոր ներգրավված կողմերի համար:

Թիրախային ցուցանիշները

- Շուրջ 300 երիտասարդ (50%-ը կին) մասնակցում է Օրագրի շրջանակներում կազմակերպվող ձեռնարկատիրական դասընթացների (25 դասընթաց):

- Շուրջ 80 սկսնակ ՓՄՁ-ներ ստանում են ֆինանսական աջակցություն և հաջողությամբ մարում են վարկերը:

- Առնվազն 55-ը շարունակում են ընդլայնվել՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:

Օրագրի հիմնական ուղղությունները

• Աջակցություն երիտասարդ ձեռներեցներին

Երիտասարդ սկսնակ ձեռներեցները սեփական բիզնես ստեղծելու, զարգացնելու համար կստանան անմիջական ոչ ֆինանսական և ֆինանսական աջակցություն, ինչը ենթադրում է մասնագիտացված ձեռնարկատական դասընթացներ, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն, ինչպես նաև Օրագրի շրջանակներում ստեղծված և ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից տնօրինվող երիտասարդների շրջանառու հիմնադրամի (400,000 եվրո) միջոցով վարկերի տրամադրում:

Անհրաժեշտության դեպքում Օրագիրն աջակցում է նաև ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Ֆինանսական ծառայություններ

- Շրջանառու ֆոնդի հիմնում (400,000 եվրո) և սկսնակ երիտասարդ ձեռնարկատերերի վարկավորում

Ոչ ֆինանսական ծառայություններ

- Ձեռնարկատիրական դասընթացներ, խորհրդատվություն և տեխնիկական օգնություն բիզնեսի բոլոր փուլերում

Իրազեկության բարձրացում

Տեղեկատվական արշավները կիրառել են երիտասարդներին այն մասին, որ ձեռներեցությունը կարող է զբաղվածության խնդրի լավագույն լուծումը լինել և կօգնեն հաղթահարել (հատկապես երիտասարդ կանանց շրջանում) ավելորդ զգուշավորությունը բիզնես ռիսկեր ստանձնելու և շահույթ ստանալու նկատմամբ: Կներկայացվեն դրական հետևանքները համայնքների և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, կլուսաբանվեն հաջողված պատմությունները, հատկապես հաջողակ կին գործարարների փորձը:

Ընթացիկ արդյունքները

Ծրագրի իրականացման առաջին վեց ամսվա ընթացքում (2013թ.-ի հոկտեմբերից 2014թ.-ի մարտը) ձեռնարկատիրական դասընթացներին

2014 թ.-ի ապրիլի դրությամբ ավարտված 5 դասընթացի և Ընտրական հանձնաժողովի որոշման արդյունքները (Լոռի, Շիրակ)

Դասընթացին մասնակցելու հայտերը	Մասնակիցները և ֆինանսավորման հայտերը	Տրամադրված վարկերը
Դիմել է 180 հոգի, որոնցից 68-ը կին (38%):	Դասընթացին մասնակցել է 83 հոգի, որոնցից 34-ը կին (41%): Վարկ ստանալու համար դիմել է 52 մասնակից, որոնցից 21-ը կին (40%): Միջին տարիքը՝ 28 տարեկան:	Հաստատվել է 35 վարկ, որոնցից 11-ը կին դիմողների համար (31%): 2014թ.-ի ապրիլի վերջի դրությամբ հաստատված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 153,652 Էվրո :

մասնակցելու համար դիմել է սկսնակ բիզնես կամ պարզապես բիզնես գաղափար ունեցող 180 երիտասարդ, որոնցից, հարցազրույցի արդյունքում 83-ը ընտրվել և մասնակցել է դասընթացներին, իսկ 35-ին տրամադրվել են վարկեր նոր բիզնես սկսելու կամ գործող բիզնեսն ընդլայնելու համար:

Շիրակի և Լոռու մարզերի ղեկավարների առաջարկով կատարվել է նաև **մարզերի գերակա ոլորտների ուսումնասիրություն** հիմնված արտադրական հատվածի առկա վիճակի, զարգացման միտումների, ներքին ռեսուրսների և պոտենցիալ շուկաների մանրակրկիտ գնահատման վրա:

- Լոռիում որպես գերակա ոլորտներ առանձնացվել են զբոսաշրջությունը, ոչխարաբուծությունը, կաթնամթերքի արտադրությունը:
- Շիրակում աճի զգալի ներուժ ունեցող ոլորտների շարքում են ձկնաբուծությունը և ձկնարտադրությունը, կարտոֆիլի արտադրությունը և վերամշակումը, մանածագործությունը և հագուստի արտադրությունը:

Ծրագրի երկրորդ փուլի համար նախատեսվող միջոցառումները

Ոչ ֆինանսական և ֆինանսական աջակցությունը Ծրագրի շահառուներին կշարունակվի: Կանցկացվի ձեռնարկատիրական ևս 20 դասընթաց և կտրվի ֆինանսավորման հայտերի ընդունման 20 հայտարարություն: Ծրագրի աշխարհագրությունը կընդլայնվի՝ ներառելով նաև Գեղարքունիքը և Տավուշը:

Տեխնիկական աջակցություն. սկսնակ և աճի փուլերում շահառուները տարբեր բնույթի տեխնիկական աջակցության կարիք կունենան կախված ոլորտային առաձևահատկություններից, ինչպես նաև առանձին ընկերություններում առկա խնդիրներից և ֆինանսական դրությունից:

Ինստիտուցիոնալացում. շրջանառու հիմնադրամի ստեղծումից և աջակցող ազգային անձնակազմի վերապատրաստումից հետո, իրականացման երկրորդ փուլում անհրաժեշտ է ապահովել, Ծրագրի մոտեցումների ինստիտուցիոնալացումը՝ ծրագրի կայունությունն ապահովելու և երիտասարդ ձեռներեցների վարկունակությունը և երկրի տնտեսության զարգացման գործում նրանց դերը ներկայացնելու համար:

Գեներային ուղղվածությունը. Ծրագրում մինչև 50% կին շահառուների ընդգրկվածությունը առաջնահերթ

խնդիրներից մեկն է: Այդ նպատակով 2014թ.-ի վերջին, երբ կարձանագրվեն առաջին դրական արդյունքները, կանցկացվեն կին շահառուների հաջողված պատմությունները լուսաբանող արշավներ: Ավելին, Ասիական զարգացման բանկի «Աջակցություն կին ձեռներեցներին» ծրագրի հետ համատեղ նախատեսվում է տարբեր համայնքներում իրականացնել կանանց ակտիվ ներգրավվածությամբ արժեզրեցման բացահայտում և դրանց զարգացման միջոցառումների ձեռնարկում: Կին ձեռներեցների ֆինանսական պլանավորման ունակությունները բարձրացնելու նպատակով, համատեղ ուժերով, կանցկացվեն «Ֆինանսական զբ-րագիտություն» թեմայով դասընթացներ՝ ներկայաց-նելով «COMFAR Mini» ծրագիրը: Կատարվի նաև կանանց կարիքների և բիզնեսի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքի գնահատում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցում նրանց լավագույնս աջակցելու համար:

Ծրագրի ծախսերը (Էվրոյով)

Միջոցառումները	Դոնոր	Ընդամենը	Գործառ-նական	Պահպան-ման
Ծրագրի իրականացման 1-ին տարին, ներառյալ ծրագրի մեկնարկը, տեղեկատվական և լուսաբանման արշավներ, մոնիթորինգ:	Ավստրիա	500,000	442,478	57,522
Շրջանառու հիմնադրամին կապիտալ ներդրում (200,000), դասընթացներ, խորհրդատվություն ողջ ծրագրի համար	ՓՄՉ ՁԱԿ	200,000	200,000	-
Տեխնիկական աջակցություն, տեղեկատվական արշավներ, հիմնական փուլի մոնիթորինգ և գնահատում	Համաձայնեցվում է:	268,000	237,168	30,832
	Ընդամենը	968,000	879,646	88,354



ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության հայաստանյան գրասենյակ
Հայաստան, Երևան 0010
Պետրոս Ադամյան փ. 14
Հեռ.՝ (374 10) 54 46 67
Էլ. փոստ՝ office.armenia@unido.org